



# ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

04 հունիսի, 2014թ.

ք. Երևան

## «Հակակոռուպցիոն ուսուցում» Երևանի ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների համար

2014 թվականի հունիսի 02-ից-04-ը Երևանում տեղի ունեցավ եռօրյա հակակոռուպցիոն ուսուցում Երևանի ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների համար:

«.....», - ասաց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա, Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում ծրագրի ղեկավար Կարեն Զադոյանը:

Ո՞րն է ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների դերը կոռուպցիայի դեմ պայքարի գործում, որո՞նք են տեղեկատվություն ստանալու մեխանիզմներն ուղղությունները, ինչպե՞ս իրակայացնել լրագրողական հետաքննություններ: Այս և այլ հարցերը ուսուցման եռօրյա ծրագրի օրակարգում են եղել: Միջոցառմանը մասնակցեցին *Գեղարքունիքի մարզի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները* և ՁԼՄ-ները:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ՁԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 Եվրո:

**Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան** (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրագեղ է, իսկ նրա իրավունքները պաշտպանված:

**Ինֆորացիայի ազատության կենտրոնը** (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

**Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.**

**Ծրագրի հանրային կայքերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL <http://www.ayla.am>:**

**Կատարող՝ Նարինե Կարապետյան, Էլ.փոստ՝ [pr@ayla.am](mailto:pr@ayla.am):**



Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա  
Հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2  
Երևան, Հայաստան, 0010

Ինֆորացիայի ազատության կենտրոն  
2 Հասցե՝ Բուզանդի 1/3  
Երևան, Հայաստան, 0010

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Հեռախոս: +37410 54 01 99  
Հեռապատճե: +37410 58 02 99

Հեռախոս: +37410 56 03 60  
Հեռապատճե: +37410 56 03 60

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն  
Հեռախոս +37410 54 64 94  
Հեռապատճե +37410 54 64 95

Եվրոպական միության գործադիր մարմինը Եվրոպական հանձնաժողովն է:

«Եվրոպական միությունը կազմված է 28 անդամ պետություններից, որոնք որոշել են աստիճանաբար իրար կապել իրենց նորարարական մեթոդը, ռեսուրսները և ապագան: Ընդարձակման 50 տարիների ընթացքում նրանք կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի, պահպանելով մշակութային բազմազանություն, հանդուրժողականություն և անհատական ազատությունները: Եվրոպական միությունը միտված է իր ձեռքբերումներն ու արժեքները կիսել իր սահմաններից դուրս պետությունների և ժողովուրդների հետ»: